13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Կազմակերպության ֆինանսների կառավարման համակարգը և խնդիրները: Թեմա 2. Ֆինանսական հաշվետվություն և դրամական հոսքեր: Թեմա 3. Ֆինանսական հաշվետվության վերլուծություն: Թեմա 4. Կարճաժամկետ ֆինանսական պլանավորում և ֆինանսավորում: Թեմա 5. Դրամական միջոցների կառավարումը: Թեմա 6. Պաշարների կառավարումը: Թեմա 7. Դեբիտորական պարտք և վարկային քաղաքականություն: Թեմա 8. Երկարաժամկետ ֆինանսական պլանավորում և կանխատեսում: Թեմա 9. Ֆինանսական շուկաներ, ինստիտուտներ և տոկոսադրույքներ: Թեմա 10. Ռիսկ և եկամտաբերություն: Թեմա 11. Փողի ժամանակային արժեքը: Թեմա 12. Պարտատոմսեր, բաժնետոմսեր և նրանց գնահատումը: Թեմա 13. Կորպորատիվ կապիտալի զին և կառուցվածք: Թեմա 14. Դիվիդենդային քաղաքականություն: Թեմա 15. Լիզինգը որպես ֆինանսավորման աղբյուր: Թեմա 16. Ածանցյալ արժեթղթեր: Թեմա 17. Սննկացում, վերակազմավորում և լուծարում: Թեմա 18. Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Бриггем Ю., Эрхардт С. Финансовый менеджмент: Пер. с англ, под ред. Е. А. Дорофеева, СПб., Питер 2012.
2. Бриггем Ю., Гапенски Л. Финансовый менеджмент: Полный курс. В 2-х т./ Пер. с англ, под ред. В. В. Ковалева. СПб., Экономическая школа 2010.
3. Ван Хорн Дж. Основы финансового менеджмента. Пер. с англ, под ред. А. В. Кравченко. М., 2013.
4. Ковалев В. В. Финансовый менеджмент: теория и практика. – 2-е изд., перераб. и доп. М.: Проспект 2013.

1. 0201/Մ 07	2. Կազմակերպությունների վարկանշում	3. 6 ECTS կրեդիտ
4. 7 ժամ/շաբաթ	5.10/10/0	
6. 2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է սովորեցնել իրականացնել կազմակերպությունների սնանկության ախտորոշում՝ կիրառելով սնանկության կանխատեսման ժամանակակից մեթոդ հանդիսացող վարկանշման մոդելները, որոնք հիմնված են կազմակերպությունների գործունեության քանակական գնահատման, փորձագիտական գնահատման և վերջինիս բնորոշ ռիսկերի գնահատման վրա:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i> 1. հիմնավորել կազմակերպության ֆինանսական կայունությունը արտաքին միջավայրի արագ փոփոխման պայմաններում, 2. ներկայացնել ռիսկի և եկամտաբերության միջև երկընտրանքի ընտրության առկայությունը, 3. նկարագրել սնանկության գնահատման և կանխատեսման ժամանակակից մեթոդները, <i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i> 1. տարանջատել ժամանակակից կազմակերպություններում ձեռնարկատիրական ռիսկ-մենեջմենթի ստորաբաժանման գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես 2. նաև այդ գործունեությամբ զբաղվող անձնակազմից պահանջվող հմտությունները և կարողությունները, 3. ընդունել կառավարչական որոշումներ՝ ձեռնարկատիրական ռիսկերի վերլուծության հիման վրա, գնահատել ձեռնարկատիրական ռիսկերը և կանխատեսել ամենատարբեր ոլորտներում՝ ռիսկերի կանխարգելման/նվազեցման հնարավոր ուղիները, <i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i> 1. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, 2. պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները, 3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. ներկայացնելու ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները, Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում, Բ1. կառուցելու կազմակերպության որակի կառավարման համակարգի և գործարար գործընթացների իրականացման մոդելներ, Բ4. առաջարկելու կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ ֆինանսական կայունության ամրապնդման համար, Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար,		

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. նախադեպերի վերլուծություն, 3. խմբային աշխատանք, 4. անհատական աշխատանք.		
12. Գնահատման մեթոդները և չափանիշները. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր		
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա16. Կազմակերպության տեղեկատվական համակարգերում առկա ռիսկերի կառավարումը: Թեմա1. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը և ռիսկերի գնահատման մեթոդիկան: Թեմա2. Սնանկության (անվճարունակության) գնահատման դասական մեթոդները: Թեմա3. Սնանկության գնահատման ժամանակակից մեթոդներ: Թեմա4. Շնորհվող վարկանիշերի տեսակները: Թեմա5. Արտաքին վարկանշում: Թեմա6. Միջազգային վարկանշման գործակալություններ: Թեմա7. Վարկանշումը որպես սնանկության գնահատման հիմնական մեթոդ: Թեմա8. Ներքին վարկանշման փուլերը: Թեմա9. Վարկանիշի շնորհման գործընթացը: Թեմա10. Ներքին վարկանշման առանձնահատկությունները: Թեմա11.Սնանկության կանխատեսման նպատակով շնորհվող վարկանիշի օգտագործման ուղղությունները:		
14.Հիմնական գրականության ցանկ 1. Ступаков В.С., Токаренко Г.С., Риск-менеджмент, учеб. пособие, М.: 2012, 2. Ларионова И.В., Риск-менеджмент: М.: 2014, 3. Шаталова Е. П., Шаталов А. Н., Оценка кредитоспособности заемщиков в банковском риск-менеджменте, Москва, КНОРУС, 2011, 4. Ендовицкий Д. А., Бочарова И. В, Анализ и оценка кредитоспособности заемщика. Москва, КНОРУС 2008, 5. Ступаков В. С., Токаренко Г. С., Риск-Менеджмент, Учебное пособие. –М.: Финансы и статистика, 2005, 6. Вяткин В. Н., Гамза В. А., Базельский процесс, Базел II – управление банковскими рисками. Москва, 2007, 191 сс. International Convergence of Capital Measurement and Capital Standards, 2005.		

1. 0201/Մ08	2. Անձնակազմի կառավարում	3. 3 ECTS կրեդիտ
4.7 Ժամ/շաբաթ	5.10/0/10	
6.2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել անձնակազմի կառավարման տեսական և գործնական հիմունքներին, նրանց սովորեցնել՝ կատարելու անձնակազմի կառավարման հետ կապված հիմնական գործառնությունները: Ուսանողների մոտ ձևավորել արդի մոտեցումները մարդկային ռեսուրսների կառավարման գործում		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնակազմի պլանավորման հիմնական ձևերին,
2. ներկայացնելու անձնակազմի գնահատման հիմնական մեթոդները,
3. թվարկելու մարդկային ռեսուրսների հավաքագրման փուլերը,
4. քննարկելու անձնակազմի մոտիվացման ժամանակակից մոտեցումները,
5. մատնանշելու անձնակազմի արդյունավետության հիմնական ցուցանիշները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնականում իրականացնել անձնակազմի պլանավորման գործընթացը,
2. վերլուծել անձնակազմի հավաքագրման հիմնական փուլերը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Մ5. նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդներին, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությանը,

Մ7. սահմանելու կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթների և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը,

Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար,

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,

Գ5. բարդ և անծանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա,

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար,

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով,

Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանք,
4. անհատական աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը 4 միավոր
3. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր
4. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր
5. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Անձնակազմի կառավարման ժամանակակից մոտեցումները: Թեմա 2. Մարդկային ռեսուրսների և աշխատատեղի պլանավորում: Թեմա 3. Մարդկային ռեսուրսների հավաքագրումը և ընտրություն: Տաղանդների ներգրավում: Թեմա 4. Թիմային աշխատանք, արդյունավետ թիմի ձևավորման նախապայմաններ: Աշխատանքի կազմակերպում: Թեմա 5. Անձնակազմի հրահանգավորման և վերահսկողության գործընթացների կազմակերպում: Թեմա 6. Անձնակազմի կատարելագործման և նորամուծությունների ներդրում: Թեմա 7. Անձնակազմի մոտիվացիոն համակարգը:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Базаров, Управление персоналом, Учебник, 8-е изд., Москва, 2010.
2. Кибанов, Управление персоналом организации, Москва, 3-е изд. 2012.
3. Х.Т. Грэхем, Р. Беннетт, Управление человеческими ресурсами, Москва, 2010.
4. Luis R. Gomez-Mejia, Balkin, Cardy, Managing Human Resources, 7th Edition, Pearson, 2013.

1. 0201/Մ09	2. Նախագծերի կառավարում	3. 3 ECTS կրեդիտ
4. 3,5 ժամ/շաբաթ	5. 10/0/0	
6. 3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել նախագծերի կառավարման զարգացմանը՝ որպես տնտեսության վարման արդիական գործիք, ինչպես նաև նախագծային կառավարման մեթոդներին ու մոդելներին, ուսանողներին սովորեցնել նախագծային զարգացման և նախագծային կառավարման տեսամեթոդական հենքերը, ինչպես նաև դրան իրականացման մոտեցումներն ու մեթոդները, նրանց ներկայացնել նախագծային զարգացման և նախագծային կառավարման արդի դրսևորումներն և առանձնահատկությունները, ինչպես նաև զարգացման միտումներն ու խնդիրները, կատարել՝ կոնկրետ իրավիճակից բխող նախագծերի նպատակային ընտրություն և նախագծային զարգացման ուղիները ճիշտ ընտրություն:		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու «նախագիծ», «նախագծային կառավարում» եզրույթների բովանդակային բնորոշիչները ու նախագծային զարգացման մոդելային առանձնահատկությունները,
2. ճանաչելու նախագծային զարգացման տեսա-մեթոդական հիմքերը,
3. ներկայացնելու նախագծային զարգացման պատմական շարժառիթներին ու իրավիճակային առանձնահատկությունները,
4. սահմանելու նախագծային կառավարման համալիր գործընթացը, և, այդ համատեքստում, դրա գործառնությանն ու կառուցվածքային բնորոշիչները և արդի դրսևորումներն ու խնդիրները,
5. ներկայացնելու նախագծային զարգացման միջազգային փորձը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նախագծային զարգացման համալիր վերլուծություն և զարգացման ազգային գերակայությունների հստակեցում,
2. նախագծելու երկրի զարգացման խնդիրներից բխող նախագծեր,
3. կատարելու նախագծային կառավարման մեթոդների և մոտեցումների նպատակային ընտրություն և նախագծերի իրագործում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստելու անհատական աշխատանքներ և զեկույցներ, ներկայացնել վերլուծական և հետազոտական աշխատանքների արդյունքները, վարել գիտական բանավեճեր և այլն,
3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները,

Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում,

Բ5. առաջարկելու նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար,

Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար,

Գ2. վերլուծելու առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,

Գ3. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանքներ,
4. անհատական աշխատանքներ

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը 4 միավոր
2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր
3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր
4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Նախագծերի կառավարման հիմունքները: Նախագծային զարգացման պատմական պատմական էվոլյուցիան. Նախագծային զարգացման անցման նախադրյալները: Նախագծի վերլուծության և օպտիմալացման ուղիներն ու ռազմավարությունները Նախագծերի մշակման ու իրագործման փուլերը Նախագծերի գործնական նշանակությունը և արդի խնդիրները. նախագծային զարգացումը որպես տնտեսությունում չօգտագործված ռեսուրս Նախագծերը և նախագծերի կառավարումը **Բաժին 2.** Նախագծերի կառավարման բովանդակությունը, մեթոդները և մոտեցումները: Նախագծերի կառավարման դերը և արդիականությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ: **Բաժին 3.** Նախագծային կառավարման համակարգը. գործառնական հիմքերը և կառուցվածքը: Նախագծային կառավարման վերլուծության գործիքները և մոդելները Նախագծերի կառավարման մեթոդները: Նախագծերի կառավարման գործընթացը և կենսացիկլը. նախագծի կառավարման գործընթացների փոխազդեցությունները: Կառավարման եռանկյունին: Նախագծերի կառավարման կազմակերպակառուցվածքային արդի առանձնահատկությունները և խնդիրները: Նախագծային կառավարման գործընթացային արդի առանձնահատկությունները և խնդիրները: **Բաժին 4.** Նախագծի ժամանակի ու առաջադրանքների կառավարումը: Ժամանակի կառավարում: Առաջադրանքների կառավարում: **Բաժին 5.** Նախագծի ռեսուրսների կառավարումը: Աշխատանքային ռեսուրսների կառավարում: Նյութական ռեսուրսների կառավարում: Ծախսերի կառավարում: Նախագծի բյուջեի պլանավորում: **Բաժին 6.** Նախագծի պլանավորում: Նախագծի պլանավորման համակարգը և նախագծի պլանի բաղկացուցիչները: Նախագծի ավտոմատացված կառավարման տրամաբանությունը MS Project համակարգի միջոցով: Նախագծի բնորոշումը և պլանային հիմնական ցուցանիշների հաստատումը: Առաջադրանքների համակարգի ձևավորումը. առաջադրանքների տիպերը և ցանկը: Առաջադրանքների տևողությունների գնահատումը. առաջադրանքի օրացույց: Առաջադրանքների միջև կապերը և նրանց տիպերը: Առաջադրանքների կառուցվածքի /WBS/ կոդը: Նախագծի արժեքների պլանավորումը: MS Project-ի կոդմիջ արժեքների հաշվարկման տրամաբանությունը: Ռեսուրսների, նշանակումների և առաջադրանքների արժեքներ. արժեքի ձևավորման մեթոդները: **Բաժին 7.** Նախագծի պլանի վերլուծություն և օպտիմալացում: Նախագծի պլանի վերլուծության և օպտիմալացման ուղիները և ռազմավարությունները: Ռեսուրսների վերլուծությունը և ծանրաբեռնվածության հարթեցումը: Ժամանակացույցի օպտիմալացման ուղիները: Առաջադրանքների տևողությունների ճշգրտումը PERT մեթոդի միջոցով: Նախագծի արժեքների վերլուծությունը և օպտիմալացումը: Ռիսկերի կառավարումը: **Բաժին 8.** Նախագծի ընթացքի կառավարում և հաշվետվություններ: Բազիսային և միջանկյալ պլաններ. պլանների հաստատումը: Նախագծի ընթացքին հետևելու սկզբունքները և մեթոդները: Ընթացիկ և հաշվետվության ամսաթվեր: Վարիացիաների գնահատումը: Աշխատանքների ընթացքի վերլուծությունը և արդյունքների կանխատեսումը: Հաշվետվությունների նախապատրաստումը **Բաժին 9.** Նախագծերի կառավարման որակավորման համակարգը և միջազգային համագործակցությունը: **Բաժին 10.** Նախագծային կառավարման զարգացումները. խնդիրները և մոտեցումները Հայաստանում: Նախագծերի կառավարումը որպես հետձգնաժամային զարգացման արդյունավետ մոտեցում: Նախագծային կառավարման արդիականությունը և նպատակահարմարությունը ՀՀ-ում: Նախագծային կառավարման գործընթացը Հայաստանում: Զարգացման խնդիրները և մոտեցումները: Պետության և մասնավոր հատվածի համագործակցության շրջանակում իրականացվող նախագծերը ՀՀ-ում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Лапыгин Ю. Н. Управление проектами: от планирования до оценки эффективности. — ОмегаЛ
2. «Москва», 2008.
3. Мазур И.И., Шапиро В.Д., Ольдерогге Н.Г. М12 Управление проектами: Учебное пособие / Под общ. ред. И.И. Мазура. — 2-е изд. — М.: Омега-Л, 2004.
4. Светлов Н.М., Светлова Г.Н. Информационные технологии управления проектами: Учебное пособие. М.: ФГОУ ВПО РГАУ–МСХА им. К.А. Тимирязева, 2007.
5. Хелдман Ким. Профессиональное управление проектами. — «Бином» «Москва», 2005.

1. 0201/Մ10	2. Կորպորատիվ կառավարում	3. 3ECTS կրեդիտ
4. 3,5 ժամ/շաբաթ	5.10/0/0	
6. 3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել կորպորատիվ կառավարման հիմունքներին, կորպորատիվ կառավարման միջազգային փորձին, մասնավոր և պետական բաժնետիրական ընկերությունների կառավարման համակարգին, ՀՀ-ում կորպորատիվ կառավարման առանձնահատկություններին և համապատասխան օրենսդրությանը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ճանաչել կորպորատիվ կառավարման ժամանակակից միջազգային ստանդարտները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. վերլուծել Հայաստանում կորպորատիվ կառավարման փորձը, համակարգի զարգացման հնարավորությունները, համապատասխան իրավական դաշտը, 2. փորձարկել դասընթացի արդյունքում ստացած գիտելիքները՝ դրանք կիրառելով ցանկացած բաժնետիրական ընկերությունում կամ այլ հաստատությունում, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) 2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել բանավեճեր, 3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Մ2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները, Մ4. դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները, Մ5. նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդներին, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությանը, Բ2. նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցելու լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին, Բ3. ընտրելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանս-սական գործիքներ և ընդունել կառավարչական որոշումներ, Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար, Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական		

և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար, Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար, Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար, Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով, Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. խմբային աշխատանք, 3. անհատական աշխատանք:
12. Գնահատման մեթոդները և չափանիշները. 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Կորպորատիվ կառավարման հիմունքները: Թեմա 2. Կորպորատիվ կառավարման համակարգի չորս տեսությունները: Թեմա 3. Կորպորացիաների տեսակները, հրապարակային ընկերությունները (հաշվետու թողարկողը): Թեմա 4. Կորպորացիաների ֆինանսավորման աղբյուրները, կորպորատիվ արժեթղթեր: Թեմա 5. Կորպորատիվ կառավարման համակարգի տարրերը: Թեմա 6. Կլանումների շուկան և կորպորատիվ կառավարումը: Թեմա 7. Անգլո-Սաքսոնյան կորպորատիվ կառավարման համակարգը: Թեմա 8. Կոնտինենտալ կորպորատիվ կառավարման համակարգը: Թեմա 9. Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը Թեմա 10. Կորպորատիվ կառավարումը Հայաստանում: Թեմա 11. G20/SՀԳ-ի կորպորատիվ կառավարման սկզբունքները:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. G20/SՀԳ-ի կողմից ընդունված «Կորպորատիվ կառավարման սկզբունքները», 2015: 2. Մելիքյան Ն., Չիլինգարյան Ա., Յոկուլսկյան Խ., Կորպորատիվ կառավարումը փոքր և միջին ձեռնարկություններում, 2018: 3. Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք, 2010: 4. Կարապետյան Ս., Դասախոսական համառոտագրեր, 2020: 5. Ա. Եդիազարյան, Խ. Խաչատրյան, Դ. Սարգսյան, Ա. Մելիքյան, Ս. Կարապետյան, —Բանկի Բաժնետերերի և Խորհրդի Անդամների Ուղեցույց, Երևան 2003, 6. (Nestle-Rowntree) Կորպորատիվ կլանման գործնական օրինակ: 7. FRC, The UK Corporate Governance Code, 2018, 8. Brealey & Myers, —Principles of Corporate Finance. McGraw-Hill, 7th edition, 2003, 9. Gregory F. Maassen, —An International Comparison of Corporate Governance Models. Erasmus University, Rotterdam, 1999, 10. Berle, A. and Means, G. (1932). The Modern Corporation and Private Property, 11. McKinsey & Company. Investor Opinion Survey on Corporate Governance, June 2000,

12. Laporta, Rafael; de-Silanes Lopez; Shleifer, Andrei; Vishny, Robert W. 1998a. —Law and Finance. Discussion Paper Number 1768. Harvard Institute of Economic Research. Harvard University,
13. Richard S. Ruback. An Overview of Takeover Defenses. Research Paper, 2003,
14. Ն. Մելիքյան, «Կորպորատիվ կառավարման համակարգի կառուցվածքը» ուղեցույց,
15. www.oecd.org, www.corpgov.am, www.corpgov.net, www.ifc.org, www.ecgi.org:

1. 0201/Մ11	2. Կառավարման ոլորտի գործնական խնդիրների լուծում (case study)	3. 3 ECTS կրեդիտ
4.3, 5 ժամ/շաբաթ	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է սովորողներին ուսանողների մոտ զարգացնել վերլուծելու և կրիտիկական իրավիճակներում կողմնորոշվելու կարողություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i> 1. ներկայացնելու հզոր ընկերությունների իրական խնդիրներն և վերջիններիս լուծման ալգորիթմները, 2. տարբերակելու կառավարման միջերն ու իրականությունները, 3. բացատրելու կառավարչական որոշումների կայացման և խնդիրների լուծման օրինաչափությունները, 4. բացահայտելու իրականացման փուլերը և այն, ինչ մենեջերը պետք է անի յուրաքանչյուրում աշխատանքն ավարտին հասցնելու համար <i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i> 1. ընդունելու կառավարչական որոշումներ, 2. լուծելու կառավարչական հիմնախնդիրներ, 3. օգտագործելու կառավարման տարբեր լծակներ՝ անհատական և խմբային որոշումների կայացումը բարելավելու համար, 4. վերլուծելու իրական բիզնեսի կրիտիկական իրավիճակները և մշակել ռազմավարական ստեղծագործ լուծումներ, 5. օգտագործելու ռազմավարական շրջանակներ, մոդելներ և գործիքներ՝ ռազմավարությունները ձևակերպելու, գնահատելու և բարելավելու համար, 6. հայտնաբերելու և ախտորոշելու պլանների և նախագծերի վատ իրականացման ընդհանուր պատճառները: <i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i> 1. վերլուծելու առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, 2. պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույունքները. Ա1. ներկայացնելու ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները, Ա3. ներկայացնելու պետական և հանրային կառավարման, ինչպես նաև գլոբալ կառավարման հիմնական տեսություններն ու դրաց առանձնահատկությունները, Բ6. կիրառելու կառավարման հմտություններ և ցուցաբերել միջին և բարձր օղակի կառավարչի ունակություններ, Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար, Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,		

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար, Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար, Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով, Գ8. Նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. նախադեպերի վերլուծություն, 3. իրավիճակային խնդիրների քննարկում, 4. խաղ-վարժություններ, 5. խմբային աշխատանքներ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշները. 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մենեջմենթի հիմունքներ, մենեջերի դերը՝ Case Study - NASA, «Կոլումբիա» տիեզերանավի վերջին առաքելությունը: Թեմա 2. Հոգեբանական անվտանգությունը Case Study - որոշումների կայացում 29,000 ոտնաչափ բարձրության վրա. ողբերգություն Էվերեստ լեռան գագաթին: Թեմա 3. Որոշումների կայացման մեթոդներ. Case Study - GPC զարեջրագործական ընկերություն՝ Ֆիլադելֆիայի ժամանակակից արվեստի թանգարան Թեմա 4. Որոշումների ընդունման կոնսենսուսային մեթոդ. Case Study - Ջոն Ֆ. Քենեդիի որոշումը ծովածոց ներխուժման ժամանակ: Թեմա 5. Որոշումների կայացման գործընթացը Case Study - «Talk of the Town Designs» ընկերության խնդիրները: Թեմա 6. Ճիշտ կայացված որոշումներ Case Study - Ջոն Ֆ. Քենեդիի որոշումը Կուբայի հրթիռային ճգնաժամում: Թեմա 7. Իրականացում Case Study - Healthcare.gov նախագծի ձևափոխումը և կարգավորումը Թեմա 8. Իրականացման փուլերը Case Study - Չիլիի հանքափորների փրկությունը: Թեմա 9. Փոփոխությունների կառավարում Case Study - Փոփոխությունները «Fuerte Construction» ընկերությունում: Թեմա 10. Փոփոխության բանաձևը, փոփոխության գործընթացի փուլերը Case Study - Իսրայելի բժշկական կենտրոնի (BIDMC) շրջադարձը: Թեմա 11. Փոփոխությունների կառավարում և առաջնորդում. - «Red Flags» խորհրդատվական ընկերությունը և «Herman Wogg»-ը: Թեմա 12. Ռազմավարությունը էկոհամակարգերում - Case Study - Ինչպես են Microsoft-ի և Apple-ի նման ընկերությունները օգտվում ցանցային էֆեկտներից: Թեմա 13. Բարձր մակարդակի միաձուլումներ Case Study - Ինչպես Salesforce- ը կիրառեց «Կապույտ օվկիանոսի» ռազմավարությունը: Թեմա 14. Աճը ճգնաժամի ժամանակ Case Study - Ինչպես Starbucks-ը հարմարվեց COVID19 համաճարակին: Թեմա 15. Ռազմավարության շրջանակներ Case Study - Ինչպես Honda-ն ընդունեց անորոշությունը՝ օգտագործելով ռազմավարական հարմարվողականությունը: Թեմա 16. Մայքլ Պորտերի «5 ուժերի վերլուծություն» Case Study - Ինչը LEGO-ին հասցրեց սնանկության եզրին:
14. Հիմնական գրականության ցանկ 1. Harvard Business School - Management Essentials. 2. Cambridge Judge Business School Executive Education - Strategic Thinking for the CXO.

1.0201/ U12	2. Մարքեթինգի կառավարում	3. 6 ECTS կրեդիտ
4.7 ժամ/շաբ.	5. 10/10/0	
6. 3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել մարքեթինգի դերը կառավարման գործընթացներում, նրանց սովորեցնել մարքեթինգային ռազմավարության հիմնական դրույթները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. քննարկելու ապրանքների և գների կառավարման գործընթացին, 2. ներկայացնելու պահանջարկի ու առաջարկի ազդեցությունը գնագոյացման գործընթացի վրա բ.գործնական մասնագիտական կարողություններ 1. պլանավորելու, ֆինանսավորելու և վերահսկելու մարքեթինգային գործընթացը, 2. գործնականում իրականացնելու մարքեթինգային ստորաբաժանումների կառավարումը, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, 3. վարելու գիտական բանավեճեր:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա4. դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները, Ա5. նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդներին, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությանը, Ա7. սահմանելու կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթների և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը, Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար, Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար, Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար, Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում՝ նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար, Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար, Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով, Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:		

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. նախադեպերի վերլուծություն, 3. խմբային աշխատանք, 4. անհատական աշխատանք
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մարքեթինգի կառավարում: Թեմա 2. Մարքեթինգի կառավարման կազմակերպումը: Թեմա 3. Մարքեթինգի ինֆորմացիոն ապահովվումը: Թեմա 4. Մարքեթինգի պլանավորումը, ֆինանսները և վերահսկումը: Թեմա 5. Մարքեթինգային ռազմավարություն: Թեմա 6. Մարքեթինգի ֆունկցիոնալ ռազմավարությունները: Թեմա 7. Ապրանքի կառավարումը: Թեմա 8. Գների կառավարումը: Թեմա 9. Պահանջարկի և առաջարկի ազդեցությունը գնագոյացման գործընթացի վրա: Թեմա 10. Բաշխման կառավարումը: Թեմա 11. Առաջխաղացման կառավարումը: Թեմա 12. Գովազդի կառավարումը: Թեմա 13. Գովազդը ժամանակակից աշխարհում և կառավարման պրոբլեմները գովազդային բիզնեսում: Թեմա 14. Գովազդն ինտերնետում:
15. Հիմնական գրականության ցանկ. 1. Ղանթարջյան Ս., Մարքեթինգի կառավարում, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011: 2. Хан Фред И., Библия рекламы, 2007. 3. Жан-Ноэль Капферер, Бренд навсегда. Создание, развитие, поддержка ценности бренда, 2007. 4. Ярослав Яненко. Настольная книга менеджера по рекламе, 2010. 5. Котлер Ф., Боуэн Д., Мейкенз Д., Маркетинг. Гостеприимство. Туризм: 2007.

1.0201/Մ13	2.Ռազմավարական կառավարում	3. 3 ECTS կրեդիտ
4.7 ժամ/շաբաթ	5.10/10/0	
6.3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել ռազմավարության մշակման և մրցունակության վերլուծության հիմնական դրույթները և սկզբունքները, սովորեցնել կազմակերպության ռազմավարության վերլուծության համար գոյություն ունեցող մի շարք մոտեցումներ և գործիքներ, զարգացնել հաշվապահական հաշվառման, ֆինանսական վերլուծությունների, մարքեթինգի, մենեջմենթի, ինովացիոն մենեջմենթի, լոգիստիկայի ֆունկցիոնալ ուղղություններից տեսություններ, սկզբունքներ, ինտեգրված գաղափարների ստեղծելու ունակությունները:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու կազմակերպության գործունեության ինդուստրիան, արտաքին միջավայրը, կատարելու մրցակցային վերլուծություն՝ կիրառելով համապատասխան մեթոդներն ու գործիքները, 2. քննարկելու կազմակերպության ներքին միջավայրը ըստ ֆունկցիոնալ ուղղությունների, բացահայտելու ներքին ուժեղ և թույլ կողմերը՝ կիրառելով համապատասխան մեթոդներն ու գործիքները, 3. նկարագրելու կազմակերպության ռազմավարությունը, բացահայտելու ռազմավարական նոր ուղիներ, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1.բացահայտելու կազմակերպության երկարաժամեւ ռազմավարական նպատակները՝ SWOT, SPACE,		

GRAND MATRIX գործիքների միջոցով, 2. կատարելու ֆինանսական հաշվետվությունների վերլուծություններ, գնահատելու իրականացվող ռազմավարության արդյունավետությունը, 3. կատարելու ֆինանսական կանխատեսումներ՝ հիմնվելով առաջադրվող ռազմավարական նոր ուղիների վրա, 4. տարանջատելու ռազմավարական նպատակների իրագործման ուղիները, որոնց հիման վրա կկազմի տարեկան գործողությունների ծրագրեր՝ բարելավելով կազմակերպական կառուցվածքը, զարգացնելով կազմակերպության ներքին պրոցեսներն ու ընթացակարգերը, 5. նախագծելու ամբողջական ռազմավարական կառավարման փաստաթուղթ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. զարգացնելու թիմային աշխատանքի իրականացման հմտությունները, 2. զարգացնելու ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողությունը:	10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները, Ա4. դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեփինիսիինգի ժամանակակից տեխնոլոգիաները, Բ2. նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին, Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար, Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար, Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար, Գ5. բարդ և անծանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար, Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով, Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը: 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Այցելություններ նախապես ընտրված կազմակերպություններ՝ տեղում ծանոթանալու կազմակերպության գործունեությանը, ներքին միջավայրին, ռազմավարական նպատակներին, ներքին պրոցեսներին և պրոցեդուրաներին, փաստաթղթերին: 2. Թիմային աշխատանքների շրջանակներում ուսանողները կմշակեն այցելած կազմակերպություններից մեկի ռազմավարական նոր ծրագիրը: 3. Այցելություններ կազմակերպությունների այլ շահակից կառույցներ՝ ֆինանսական, որակ սերտիֆիկացման, պետական և այլն: 4. Հրավիրյալ դասախոսներ՝ ֆինանսական, պետական կամ այլ շահակից կառույցներից: 5. Թիմային ներկայացումներ:
---	---

12. Գնահատման մեթոդները և չափանիշները.

1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը 4 միավոր
2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր
3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր
4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ռազմավարական կառավարման գործընթացը: 1.1 Ռազմավարական կառավարման էությունը: 1.2 Ռազմավարական կառավարման փուլերը: 1.3 Արդյունավետ ռազմավարական կառավարման մոդելը: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 2. Կազմակերպության արտաքին միջավայր: 2.1 Կազմակերպության անուղղակի ազդեցության ոլորտները: 2.2 Կազմակերպության ուղղակի ազդեցության ոլորտները: 2.3 Արտաքին գործոնային գնահատում: 2.4 Ինդուստրիայի վերլուծությունը: Մ. Պորտերի մրցակցության տեսությունը: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 3. Կազմակերպության ներքին միջավայր: 3.1 Կազմակերպության ներքին միջավայրի տարրերը և դրանց փոխհարաբերությունները: 3.2 Կազմակերպության արժեզրեայի ձևավորումը: 3.3 Ներքին գործոնային գնահատում: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 4. Կազմակերպության ֆինանսական մոդելավորում: 4.1 Կազմակերպության գործունեության ֆինանսական վերլուծությունը: 4.2 Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների ձևավորումը և վերլուծությունը: 4.3 Կազմակերպության ֆինանսական պլանավորման և կանխատեսման մոդելներ: 4.4 Կազմակերպության գործունեության վերլուծությունը ֆինանսական ցուցանիշների միջոցով: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 5. Կազմակերպության ռազմավարությունները, դրանց տեսակները: 5.1 Ինտեգրման ռազմավարությունները. ուղղահայաց և հորիզոնական ինտեգրումներ: Դեպքի ուսումնասիրություն: 5.2 Ինտենսիվ ռազմավարությունները. շուկայի զարգացման, շուկայի ընդլայնման և առաջմղման ռազմավարությունները: Դեպքի ուսումնասիրություն: 5.3 Դիվերսիֆիկացման ռազմավարությունները. փոխկապակցված և ոչ փոխկապակցված դիվերսիֆիկացիաներ: Դեպքի ուսումնասիրություն: 5.4 Պաշտպանական ռազմավարությունները. լիկվիդացման, ակտիվների իրացման ռազմավարություններ: Դեպքի ուսումնասիրություն: 5.5 Մ. Պորտերի ջեներիկ ռազմավարությունները: Դեպքի ուսումնասիրություն: 5.6 Նորարարական ռազմավարություններ: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 6. Կազմակերպության ռազմավարության մշակումը և ընտրությունը: 6.1 Կազմակերպության ռազմավարության վերլուծության գործիքները: 6.2 Կազմակերպության ռազմավարության վերլուծություն և ընտրություն: SWOT , BCG, SPACE, InternalExtrenal Matrix, Grand Strategy Matrix գործիքները: Դեպքի ուսումնասիրություն:

Բաժին 7. Կազմակերպության ռազմավարության իրականացումը: 7.1 Տարեկան նպատակներ: 7.2 Քաղաքականություն, կարգեր, ընթացակարգեր: 7.3 Կազմակերպության կառուցվածք և ռազմավարություն: Վերակառուցում, ռեինժինիրինգ և էինժինիրինգ: 7.4 Ռազմավարության գնահատումը: Դեպքի ուսումնասիրություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. А. А. Томсон, А. Дж. Стрикленд, Стратегически Менеджмент, Москва, 1998.
2. Fred R. Davit, Strategic Management, Concepts and Cases, 13th edition, 2013.
3. W. Chan Kim, R. Mauborgne, Blue Ocean Strategy, Harvard press, 2005.
4. Paul Dobson, Kenneth Starkey and John Richards, Strategic Management, Issues and Cases, 2004
5. V. Coda, Entrepreneurial Values and Strategic Management, Boston University Press, 2010.
6. M. Beccera, Theory of the Firm for Strategic Management, Cambridge, 2009.
7. Michael E. Porter's, "Competitive Strategy: Techniques for Analyzing Industries and Competitors", 1980.

1.0201/Մ14	2.Լոգիստիկա. մատակարարման շղթաների կառավարում	3. 3 ECTS կրեդիտ
4.3,5 Ժամ/շաբաթ	5.10/0/10	
6.3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել և նրանց մոտ ձևավորել պատկերացում կազմակերպության արդյունավետ լոգիստիկական համակարգի ստեղծման նպատակների, մեթոդների և օգտագործվող գործնական գործիքակազմի վերաբերյալ, սովորեցնել կատարել լոգիստիկական-կողմնորոշիչ վերլուծություններ օգտագործվող նյութական և աշխատանքային ռեսուրսների հոսքերի արդյունավետ կառավարման համար, իրականացնել գործընթացների կազմակերպմանն ու կառավարմանն ուղղված աշխատանքների բարելավում, կատարել նյութական ու տեղեկատվական հոսքերի համակարգման աշխատանքների կառավարում, իրականացնել լոգիստիկական համակարգերի մշակման ու ներդրման աշխատանքներ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. մատնանշելու լոգիստիկայի և մատակարարման շղթաների կառավարման մեթոդները, 2. նկարագրելու լոգիստիկայի առանցքային ոլորտներում (մատակարարում, արտադրություն, բաշխում) իրականացվող հիմնական գործառնությունները և օպերացիաները, 3. ներկայացնելու մատակարարման բազմամակարդակ ինտեգրացված շղթաների ձևավորման սկզբունքները, նկարագրելու լոգիստիկայում կիրառվող հիմնական մեթոդները, համակարգերը ու հայեցակարգերը, 4. քննարկելու լոգիստիկական համակարգի բոլոր օղակներում կիրառվող պաշարների կառավարման համակարգերը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. վերլուծելու իրական մատակարարման շղթաները, 2. հաշվարկելու մատակարարման շղթաների հիմնական չափանիշները, 3. նախագծելու և իրացնելու անհրաժեշտ ռազմավարություններ լոգիստիկական համակարգի կատարելագործման վերաբերյալ, 4. գնահատելու ծախսերի մեծությունը մատակարարման շղթաներում, 5. նախագծելու լոգիստիկական գործարարության գործընթացներ մատակարարման շղթաներում, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները, Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում, Բ2. նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին, Բ5. առաջարկելու նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար, Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,		

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար, Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար, Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա, Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար: Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջմունքները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով: Գ8. Նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. խնդիրների լուծում, 3. հիմնախնդիրների քննարկում և լուծման մեթոդների առաջարկում, 4. անհատական աշխատանք
12. Գնահատման մեթոդները և չափանիշները. 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Լոգիստիկայի և մատակարարման շղթաների կառավարման (ՄՇԿ) զարգացման դիալեկտիկական ու մեթոդաբանությունը: Թեմա 2. Լոգիստիկայի և ՄՇԿ հասկացությունները: Լոգիստիկական համակարգերի կառավարման հիմնական հայեցակարգերը: Թեմա 3. Լոգիստիկայի և ՄՇԿ տնտեսական հիմքերը: Թեմա 4. Մատակարարման լոգիստիկա: Թեմա 5. Արտադրության լոգիստիկա: Թեմա 6. Բաշխման լոգիստիկա: Թեմա 7. Պաշարների կառավարումը մատակարարման շղթաներում: Թեմա 8. Պահեստավորման լոգիստիկա: Թեմա 9. Տրանսպորտային աշխատանքները մատակարարման շղթաներում: Թեմա 10. Լոգիստիկական կենտրոններ: Լոգիստիկական գործառույթների և գործարարության գործընթացների աուտսորսինգ: Թեմա 11. Կառավարումը լոգիստիկական համակարգերում: Լոգիստիկական համակարգերի նախագծումը: Թեմա 12. Լոգիստիկայում և մատակարարման շղթաներում կիրառվող տեղեկատվական համակարգերը և տեխնոլոգիաները:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Աբրահամյան Վ. Գ. Գործնական լոգիստիկա. Արտադրանքի կյանքի պարբերաշրջանի փուլերի լոգիստիկական-կողմնորոշիչ կառավարումը: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2014. 2. Бауэрсокс Д., Клосс Д. Логистика: интегрированная цепь поставок / Пер.с англ. - М.: Олимп-Бизнес, 2009. 3. Гаррисон А., Гок Р. В. Логистика. Стратегия управления и конкурентирования через цепочки поставок. – М.: — Дело и Сервис, 2010. 4. Григорьев М. Н., Долгов А. П., Уваров С. А. Логистика. Продвинутый курс. - М.: Издательство Юрайт, 2015. 5. Корпоративная логистика. / под ред. В.И. Смирнова. – М.: ИНФРА-М, 2015. 6. Логистика: Учебник / Под ред. Б. А.Аникина. 3-е изд., перераб и доп. -М.: ИНФРА-М, 2009.

7. Логистика и управление цепями поставок. Теория и практика. Основы логистики: учебник / под ред. Б.А. Аникина и Т.А. Родкиной. - М.: Проспект, 2014.
8. Логистика и управление цепями поставок. Теория и практика. Основные и обеспечивающие функциональные подсистемы логистики: учебник / под ред. Б.А. Аникина и Т.А. Родкиной. - М.: Проспект, 2014.
9. Лукинский В.С. и др. Логистика и управления цепями поставок: учебник и практикум для академического бакалавриата. -М.: Издательство Юрайт, 2016.
10. Абрамян В.Г. Логистика: управление бизнес-процессами в интегрированных логистических цепях поставок. Практикум. Учебное пособие. -Ереван, Издательство РАУ, 2015.

1.0201/Մ15	2.Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում	3. 3 ECTS կրեդիտ
4.3,5 ժամ/շաբաթ	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գիտելիքներ տալ աշխատանքային հարաբերությունների առաջացման, ձևավորման, զարգացման և կարգավորման վերաբերյալ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. քննարկելու աշխատանքային հարաբերությունների առաջացման, ձևավորման, և զարգացման առանձնահատկությունները, 2. ճանաչելու ոլորտը կարգավորող օրենսդրական նորմերը, 3. ներկայացնելու ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները, 4. դասակարգելու աշխատանքային հարաբերությունների վերլուծության մեթոդները 5. քննարկելու լոգիստիկական համակարգի բոլոր օղակներում կիրառվող պաշարների կառավարման համակարգերը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. առաջարկելու լուծումներ աշխատանքային հարաբերությունների այս կամ այն իրավիճակում ծագող խնդիրների վերաբերյալ, 2. օգտագործելու միկրո և մակրո մակարդակներում աշխատանքային հարաբերությունների վերլուծության և կարգավորման մեխանիզմները գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում:

Ա6. կիրառելու աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները

Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար:

